ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Եղեգնավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Եղեգնավան, /0234/ 6 26 46, yeghegnavan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՀՈՒԼԻՍԻ 2014թվականի N 18-Ն

ԵՂԵԳՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014-2018 թթ.. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ.

Հաստատել Եղեգնավան համայնքի 2014-2018 թթ.. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը համաձայն հավելվածի:

	Կողմ -7	Դեմ -0	Ձեռնպահ -0
1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԴԵԼԱ			
2. ԱՄԻՐՅԱՆ ՁՈՅԱ			
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՋԻՎԱՆ			
4. ԵՓՐԵՄՅԱՆ ՍԵՐՈԲ			
5. ԿԱԳՐԱՄԱՆՅԱՆ ԺԱՆՆԱ			
6. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ			
7. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՎՍԵՓ ՂԱՁԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ԵՂԵԳՆԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

2014-2018 թթ. ՍՈՑԻԱԼ - ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Կազմեց՝ համայնքի ղեկավար Հ. Ղազարյանը

Հաստատվել է համայնքի ավագանու «23» հուլիսի 2014 թ.

թիվ 18 որոշմամբ

2014 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Նախաբան..... 2
2. Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի գնահատում..... 3
3. Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները..... 9
4. Ըստ առանձին բնագավառների առաջնահերթ ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում..... 9
5. Համայնքի բյուջեի ֆինանսական միջոցների գնահատում և կանխատեսում.. 16
6. Համայնքի զարգացման քառամյա ծրագրի հիմնական ցուցանիշները 17
7. Գյուղատնտեսության ցուցանիշներ..... 18
8. Եզրափակում..... 19
9. Հավելված 1 Գյուղապետարանի աշխատակազմի և ենթակա կազմակերպությունների կառուցվածքը..... 20
10. Հավելված 2 Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը..... 21
11. Հավելված 3 Համայնքի հողային ֆոնդի բաշխումը..... 22

1. ՆԱԽԱԲԱՆ

Համայնքի զարգացման քառամյա ծրագիրը այն հիմնական փաստաթղթերից մեկն է, որը մշակվում է համայնքի ղեկավարի և գյուղապետարանի աշխատակազմի կողմից, քննարկվում և հաստատվում է համայնքի ավագանու կողմից և դրվում է գործողության մեջ: Այն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսվում է առաջիկա չորս տարիների ընթացքում ռազմավարական բաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացումը:

Համայնքի ներդաշնակ զարգացման, բնակչության սոցիալ-տնտեսական առաջընթացի ապահովման, սոցիալ-մշակութային քաղաքականության ներդրման և բարեկեցության մակարդակի բարձրացման նպատակով առաջիկա չորս տարիներին քառանյա ծրագիրը հանդիսանալու է ամենօրյա աշխատանքային փաստաթուղթ:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

2.1 Աշխարհագրական դիրքը, պատմական ակնարկ

Համայնք Արարատի տարածաշրջանում, Արարատ քաղաքից 10 կմ. հեռավորության վրա: Մարզկենտրոնից գտնվում է մոտ 25 կմ. հարավ: Գյուղը հիշատակվում է 1805 թվականից: Նախկինում ունեցել է Շիդլի, Շիդրլու, Շիթլու, Շյուտլի, Շուդլու, Շուխնի, Շիդլու անվանումները: Եղեգնավան է վերանվանվել 1991 թվականին:

Համայնքը գտնվում է միջինարաքսյան գոգավորությունում, ծովի մակարդակից 820 մ. բարձրության վրա: Կլիման չոր խիստ ցամաքային է: Ձմեռները սկսվում են դեկտեմբերի կեսերին, հունվարյան միջին ջերմաստիճանը հասնում է -15 C°-ից -20 C°: Ամառը տևական է՝ մայիսից մինչև հոկտեմբեր, օդի միջին ամսական ջերմությունը հասնում է +25 C°-ից մինչև +35 C°, իսկ առավելագույնը՝ +42 C°: Հաճախ լինում են խորշակներ, որոնք զգալի վնաս են հասցնում գյուղատնտեսությանը: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 300-350 մմ. է: Բնական լանդշաֆտները կիսանապատներ են, որոնք ոռոգման արդյունքում վեր են ածվել կուլտուր-ոռոգելի լանդշաֆտի: Ագրոկլիմայական տեսակետից ընկած է բացարձակ ոռոգման գոտում:

Գյուղատնտեսական նշանակության հողերը զբաղեցնում են 971,19 հա.: Համայնքի տնտեսության մասնագիտացման ճյուղը գյուղատնտեսությունն ու անասնապահությունն է: Համախառն բերքի մեծ մասը տալիս է բուսաբուծությունը: Համայնքի հողերը օգտագործվում են որպես վարելահողեր՝ մոտ 403,24 հա., պտղատու և խաղողի այգիները՝ 91,89 հա.: Զբաղվում են այգեգործությամբ, խաղողագործությամբ, բանջարաբուծությամբ: Զբաղվում են նաև կաթնամսատու անասնապահությամբ, թռչնաբուծությամբ:

2.2 Ժողովրդագրություն

1831 թ.-ի գյուղն ունեցել է 263, 1897 թ.-ին՝ 992, 1939 թ.-ին՝ 548, 1959 թ.-ին՝ 526, 1979 թ.-ին՝ 1526, 1989 թ.-ին՝ 1931 բնակիչ: 1988-1989 թթ.. այստեղ են գաղթել շուրջ 2600 հայ բնակիչ: Ըստ 2005 թ.-ի ազգային վիճակագրական ծառայության տվյալների համայնքի բնակչությունը կազմում է 1712 մարդ: 2014 թ.-ի հունվարի դրությամբ գյուղի բնակչության թիվը կազմում է 2043 մարդ, որից մինչաշխատունակ տարիքի բնակչությունը կազմում է 34%, աշխատունակ տարիքի ներկայացուցիչները՝ 57%, հետաշխատունակները՝ 9%: Գյուղն ունի 738 տնտեսություն, դպրոց, բուժամբուլատորիա, մշակույթի տուն, փոստ մսուր-մանկապարտեզ, որը գործում է համայնքի միջնակարգ դպրոցի շենքում:

Գյուղում ապրում են 2043 բնակիչներ, որոնցից 49% տղամարդիկ են, 51 %՝ կանայք:

Բնակչության սոցիալական կազմը հետևյալն է ՝

1. Երեխաներ 0-6 տ՝ 95
2. Դպրոցական 7-17 տ՝ 247
3. 18-62 տարեկան 1519
4. Թոշակառուներ՝ 182
5. Հաշմանդամներ՝ 73

Գյուղն ունի 738 ծուխ, որոնցից 44-ն ընդգրկված են «Ընտանեկան նպաստ» համակարգում:

2.3 Տեղական ինքնակառավարման մարմինները

Գյուղը կառավարվում է համայնքի ղեկավարի՝ գյուղապետի կողմից, որն ընտրվում է չորս տարին մեկ անգամ: Գյուղապետը ստեղծել է աշխատակազմ հետևյալ կառուցվածքով՝

1. Տեղակալ 1 դրույք
2. Աշխատակազմի քարտուղար 1 դրույք
3. Գլխավոր մասնագետ 1 դրույք
4. Առաջատար մասնագետ 1 դրույք
5. Առաջին կարգի մասնագետ 1 դրույք
6. Երկրորդ կարգի մասնագետ 1 դրույք

Համայնքի ենթակա կառույցներն են՝

1. Մշակույթի տուն
2. Գրադարան
3. «ՀԵՔԻԱԹ» ՀՈԱԿ մանկապարտեզ

Աշխատակազմի ամբողջ ապարատը բաղկացած 7 հոգուց: Համայնքի ղեկավարի աշխատակազմի և ենթակառույցների կառուցվածքը բերված է հավելված 1 – ում:

Համայնքի ավագանին բաղկացած է 7 անդամներից :

Համայնքն ունի սեփականություն, որի իրավունքը պաշտպանված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով: Համայնքի սեփականություն կարող են լինել անշարժ և շարժական գույքը, դրամական միջոցները և գույքային այլ իրավունքներ:

Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը բերված է հավելված 2-ում:

Գյուղապետարանը գտնվում է համայնքի կենտրոնում, շենքային պայմանները բավարար են, գույքը նորացված է, համալրված է համակարգչային տեխնիկայով: Համայնքում առկա է համախմբվածություն, որը սակայն չի հանգեցրել սոցիալական ինստիտուտների ձևավորման: Համայնքում չկան ֆորմալ միավորումներ:

2.4. Զբաղվածություն

Համայնքի վարչական տարածքի բնակչության ընդհանուր թվաքանակից զբաղվածներ՝ 1272 մարդ, այդ թվում՝ գյուղատնտեսական աշխատանքներով՝ 1198 մարդ, այլ բնույթի ոչ գյուղատնտեսական աշխատանքներով՝ 59 մարդ, շուրջ 15 մարդ մեկնում է արտագնա աշխատանքի:

Աշխատատեղերի պակասը և սոցիալ-տնտեսական անբարենպաստ պայմանները խթանում են բնակչության արտագնա աշխատանքի մեկնելուն:

Համայնքի տարածքում գործում են 6 պարենային խանութներ, գրանցված են անհատ ձեռներեցներ:

Բնակիչների եկամուտների հիմնական աղբյուրը թոշակներն ու նպաստներն են:

2.5. Գյուղատնտեսություն, հողատարածքների օգտագործում

Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի հուլիսի 21-ի թիվ 1265-Ն որոշմամբ 2005 թվականին համայնքի տարածքում գտնվող հողերն անհատույց հանձնվել են համայնքին և հանդիսանում են համայնքային սեփականություն:

Համայնքի վարչական տարածքը 1152.0 հա է, որից 971.15 հա գյուղատնտեսական նշանակության հողեր, այդ թվում վարելահողեր՝ 402.72 հա, պտղատու այգիներ՝ 4.92 հա, խաղողի այգիներ՝ 87.49 հա, արոտավայրեր՝ 39.07 հա, այլ հողատարածքներ՝ 436.95 հա:
Եղեգնավան համայնքի հողային ֆոնդի բաշխումը բերված է հավելված N 3-ում:

2013 թվականի ընթացքում համայնքում գյուղատնտեսական ապրանքներից արտադրվել է հիմնականում՝ հացահատիկային մշակաբույս՝ 429 տոննա, բանջարեղեն՝ 2993 տոննա, խաղող՝ 1312 տոննա, կերակրային մշակաբույսեր՝ 1505 տոննա, պտուղ և հատապտուղ՝ 1620 տոննա:
2013 թվականի հունվարի 1-ի դրությամբ համայնքում անասնապահության հիմնական տեսակներն են՝ խոշոր եղջերավոր անասուններ՝ 432 գլուխ, խոզեր՝ 68 գլուխ, ոչխարներ՝ 1736 գլուխ, թռչուններ՝ 2426 թև:

2.6. Բնակարանային և կոմունալ տնտեսություն

Համայնքի բնակելի ֆոնդը կազմում է 465 առանձնատուն: Նոր թաղամասում, որը հիմնվել է 1991 թվականին, այժմ ավելի քան 105 տների շինարարություն գտնվում է տարբեր աստիճանի անավարտ վիճակում:

Համայնքում գազիֆիկացման ցանցի անցկացման աշխատանքները սկսվել են 2000 թվականից: 2013 թվականի հունվարի 1-ի դրությամբ գազամատակարարմամբ ապահովված են համայնքի 194 առանձնատուն: Գազիֆիկացված է գյուղի 95 %-ը, որոշ հատվածներ գազիֆիկացման կարիք ունեն:

Նոր կառուցապատվող փողոցներում դեռևս չկա էլեկտրական հոսանք:.

Համայնքն ապահոված է ցերեկային լուսավորությամբ: Լուսավորման համակարգերի անխափան շահագործումն ապահովելու նպատակով համայնքի բյուջեի միջոցներից հատկացումներ են կատարվում, ինչի շնորհիվ իրականացվնում է համակարգերի սպասարկումը, որի հետևանքով երեկոյան և գիշերային ժամերին փողոցներով երթևեկելը և՝ վարորդների, և՝ բնակիչների համար առավել անվտանգ և ապահով է: Սակայն այս ասպարեզում էլ կան խնդիրներ:

Նախորդ տարիներին մեծ աշխատանքներ են կատարվել ջրամատակարարման ասպարեզում, որի արդյունքում լուծվել է բնակչության խմելու ջրի հարցը, իրականացվել են նաև ջրամատակարարման ներքին ցանցի կառուցման աշխատանքներ: 2014 թ-ին կավարտվի ներքին ցանցի կառուցման և բնակելի տների ջրամատակարարման աշխատանքները:

2.7. Բնության և շրջակա միջավայրի պահպանություն

Բնության և շրջակա միջավայրի պահպանությունը նորմալ կենսագործունեության ամենաանհրաժեշտ գործոնն է, որի հետևանքով էլ համայնքի առջև ծառացած կարևորագույն խնդիրներից մեկը ազգաբնակչության կենցաղային աղբի տեղափոխման և համայնքի տարածքի մաքրության հարցն է:

Բնակչության կենցաղային աղբի հեռացումը և համայնքի տարածքի աղբահանության կազմակերպումը իրականացվում է գյուղապետարանի կողմից, որի դիմաց համայնքի ավագանու որոշմամբ բնակիչներից գանձվում է տեղական վճար, 1 շնչից՝ 100 դրամ ամսական:

Աղբահանությունը այսօր բավարար հիմքերի վրա է, սակայն անհրաժեշտ է օր-օրի որոնել և օգտագործել նոր տեխնոլոգիաներ բնության և շրջակա միջավայրի պահպանության ապահովման համար: Մեր համայնքը չունի անտառածածկ գոտի, սակավ են նաև կանաչապատ տարածքները, բացակայում են այգիներն ու պուրակները, որի հետևանքով առավել կարևոր է դառնում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների հավուր պատշաճի կազմակերպումը, շրջակա միջավայրի պահպանումը, նորմալ կենսագործունեության ապահովումը:

«Աղբահանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումից հետո մշակվեց և գործողության մեջ դրվեց համայնքում աղբահանության համար վճարողների հաշվառման, աղբահանության իրականացման վճարների հավաքագրման և բյուջե փոխանցման կարգը:

Այս ծրագրում իրականացվող գործառույթները հետևյալն են.

ա. փողոցների սանիտարական մաքրում,

բ. կենցաղային աղբահանություն,

գ. գերեզմանատների տարածքների մաքրում:

Նախատեսվում է շարունակել այս աշխատանքների կատարումը նաև հաջորդ տարիներին, ավելացնելով աղբահանության ծավալները, մշակելով նոր մեխանիզմներ աղբահանության վարձավճարների գանձման ուղղությամբ, բնակչության շրջանում աշխատանք տանել շրջակա միջավայրի մաքրության և պահպանության ապահովման գործում, բարելավել ծառայությունների մատուցման որակը:

Կանաչապատման ուղղությամբ նույնպես գյուղապետարանը նախատեսում է իրականացնել որոշակի ծրագրեր, այդ թվում՝ կազմակերպել ծառատունկ:

Համայնքը չունի կոյուղու համակարգ, ինչը կարևորագույն գործոններից մեկն է բնության և շրջակա միջավայրի պահպանության համար:

2.8. Տրանսպորտ, ճանապարհային տնտեսություն և կապ

Համայնքի բնակիչները հիմնականում մարզկենտրոն հասնելու համար օգտվում են երթուղային տրանսպորտի միջոցներից՝ ավտոբուսից և միկրոավտոբուսից:

Համայնքը չունի ֆիքսված հեռախոսակապ: Համայնքում գործում են «ՎիվաՍել» և «Օրանժ-Արմենիա» բջջային ցանցերը, կա ինտերնետ կապ:

Շատ են ճանապարհային տնտեսության հետ կապված խնդիրները: Համայնքին մոտ են տարածաշրջանի երկու քաղաքները՝ Վեդին և Արարատը, որտեղ և գտնվում են տարբեր կոմունիկացիոն ծառայությունները: Բնակչության կապը նախկին շրջկենտրոնի՝ Վեդի քաղաքի և Արարատ քաղաքի հետ կապող միակ ճանապարհը Այգավան տանող ճանապարհն է, որը գտնվում է անմխիթար վիճակում:

Ճանապարհային տնտեսության ոլորտում դեռևս չեն իրականացվել կապիտալ ներդրումներ, քանի որ նոր է անցկացվել խմելու ջրի ներքին ցանցը: Նշված աշխատանքները պահանջում են զգալի ֆինանսական ներդրումներ: Համայնքի բյուջեի միջոցների հաշվին անհնար է նշված ծրագրերի իրականացումը, սակայն նախատեսվում է քառամյա ծրագրի ընթացքում որոնել դոնոր կազմակերպություններ, հնարավորության դեպքում օգտվել սոցիալական ներդրումային ծրագրերից և համայնքում իրականացնել նախատեսված ծրագրերը:

Բնակչությունը հնարավորություն ունի դիտելու ավելի քան 15 հեռուստաալիք:
Համայնքն ունի կանոնավոր գործող փոստատուն:

2.9. Կրթություն

Համայնքն ունի մեկ միջնակարգ դպրոց, այն վերջին տարիներին մասնակիորեն վերանորոգվել է՝ փոխնել է շենքի տանիքը և լուսամուտները: Շենքը ներքին հարդարման և լոկալ ջեռուցում անցկացնելու կարիք ունի: Դպրոցում սովորում են 181 աշակերտ, կա 23 աշխատատեղ: Մեկ ուսուցչին ընկնում է 7.8 աշակերտ:

Համայնքն ունի 2043 բնակիչ, որոնցից մինչև 6 տարեկան՝ 95: Սակայն համայնքը չունի մանկապարտեզի շենք: «ՀԵՔԻԱԹ» ՀՈԱԿ մանկապարտեզը գործում է միջնակարգ դպրոցի մի մասում, որտեղ կազմակերպվում է երեխաների նախադպրոցական կրթությունը: Սակայն դա չի նվազեցնում համայնքում մանկապարտեզ կառուցելու անհրաժեշտությունը, որը սակայն առանց նպատակային հատկացումների գրեթե անհնար է իրագործել: Այն իրագործելու համար անհրաժեշտ է միավորել համայնքի բնակիչների, շահագրգիռ կազմակերպությունների ուժերը, բնակչության շրջանում տանել բացատրական աշխատանք՝ աջակցելու և սատարելու ծրագրի իրականացմանը:

Նախատեսվում է քառամյա ծրագրի ընթացքում սկսել մանկապարտեզի կառուցման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակումը:

2.10. Հանգիստ, մշակույթ, կրոն, սպորտ

Համայնքում գործում են համայնքային ենթակայության մշակույթի տունը, պարի և ասմունքի խմբակներ, ինչը նպաստում է երեխաների արտադպրոցական գեղագիտական դաստիարակությանը, նրանց ունակությունների, կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համայնքի բնակչությունը հիմնականում վճարունակ չէ, համայնքի մշակույթի տանը գործող խմբակները անվճար են:

Համայնքը չունի մարզահրապարակներ, որի հետևանքով երիտասարդությունը զրկվում է իր ակտիվ հանգիստը կազմակերպելու հնարավորությունից:

Համայնքում կազմակերպվում են մշակութային, երիտասարդական միջոցառումներ: Նախատեսվում է առաջիկայում նույնպես շարունակել այս աշխատանքները՝ հնարավորինս շատ մասնակիցներ ընդգրկելով իրականացվող ծրագրերում:

Գրադարանը գործում է մշակույթի տան շենքում և ունի ավելի քան 1463 կտոր գրականություն:

Գյուղապետարանը սատարում է վերը նշված կազմակերպություններին, աջակցում է նրանց՝ իրենց գործունեությունն իրականացնելու գործում:

Հանգստի գոտիների ստեղծումը կնպաստի համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, կրթական, ֆիզիկական դաստիարակության զարգացման գործին, սակայն համայնքի բյուջեի միջոցների հաշվին այս ծրագրերի իրագործումը գրեթե անհնար է: Այստեղ նախատեսվում են որպես ֆինանսավորման աղբյուրներ օգտագործել սոցիալական հիմնադրամների միջոցները:

2.11. Առողջապահություն

Համայնքի վարչական տարածքում գործող միակ առողջապահական հիմնարկը բժշկական ամբուլատորիան է, որի շենքը կառուցվել է 1957 թ-ին, մասսամբ վերանորոգվել է 2011 թ-ին, մյուս մասը վերանորոգման կարիք ունի:

Գյուղապետարանի կողմից անընդմեջ աջակցություն և վերահսկողություն է իրականացվում, որպեսզի պատշաճ մակարդակով կազմակերպվի համայնքի բնակչության բժշկական սպասարկումը:

2.12. Համայնքի ուժեղ կողմերը

1) համայնքի բոլոր փողոցները ունեն ցերեկային լուսավորություն.
2) խմելու ջրի առկայություն.
3) համայնքի մոտ 90%-ը գազիֆիկացված է.
4) գյուղում բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթությամբ մասնագետների առկայություն.
5) համայնքի ղեկավար-ավագանի-բնակիչներ՝ ամուր կապ և փոխհամաձայնեցում.
6) համայնքի ղեկավարի երկարամյա փորձ և ազգաբնակչության վստահություն:

2.13 Համայնքի թույլ կողմերը

1) ճանապարհների անբարեկարգ վիճակ.
2) գործազրկության առկայություն, աշխատատեղերի սակավություն.
3) ազգաբնակչության անվճարունակություն, սոցիալ-տնտեսական պայմանների ոչ բարձր մակարդակ.
4) մանկապարտեզի շենքի բացակայություն,
5) վարչական շենքի պայմանների բարելավման անհրաժեշտություն.
6) որոշ փողոցներում խմելու ջրագծի ներքին ցանցի կառուցման անհրաժեշտություն.
7) գազիֆիկացման ծավալների ավելացման անհրաժեշտություն.
8) համայնքում կոյուղու բացակայություն.
9) գյուղացու եկամուտները շատ ցածր են, կապված հողերի ոչ բավարար ու ճիշտ մշակմամբ, ինչպես նաև պարբերաբար կրկնվող բնակլիմայական աղետներով:

2.14. Համայնքին սպառնացող վտանգներ

1) Պարբերաբար կրկնվող բնակլիմայական աղետներ /կարկուտ, ջրածածկ և այլն/:
2) Վարելահողերի մի մասի չմշակելու հետևանքով հողերի որակի վատացում:

3. ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

3.1. Ռազմավարությունը

Գյուղապետարանի ռազմավարական քաղաքականությունն է՝ բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, գյուղը դարձնել գեղեցիկ, բարեկարգ և բարեկեցիկ բնակավայրերից մեկը:

3.2 Հիմնական նպատակները

Բարեփոխումներ կատարելով նախատեսվում է հասնել հետևյալ նպատակներին՝

1) պաշտպանել համայնքի բնակչության իրավունքները և օրինական շահերը.

2) բարելավել համայնքի բնակչության կոմունալ-կենցաղային պայմանները.

3) ապահովել համայնքի շինությունների պահպանումը, շահագործումը և բարեկարգումը.

4) նպաստել մշակույթի, մարզական և առողջապահական օջախների նորմալ գործունեությանը.

5) հատուկ ուշադրություն դարձնել կրթության օջախների նորմալ գործունեությանը.

6) միջոցներ ձեռնարկել սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ.

7) բարձրացնել գյուղապետարանի աշխատակազմի և համայնքային ենթակայության հիմնարկների կառավարման արդյունավետությունը.

ինչպես նաև՝

8) բնակչության խմելու ջրի մակարդակի բարելավում.

9) ներհամայնքային ճանապարհների և փողոցների վերանորոգում.

10) սելավատարների վերակառուցում:

4. ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ, ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ ԵՎ ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

4.1. Տարածքային զարգացում և քաղաքաշինություն

1991 թ-ի ավագանու որոշմամբ անվանափոխվել են համայնքի փողոցները և թվային կարգով իրականացվել են շինությունների համարակալումը:

Համայնքի տարածքում ավարտված և կիսակառույց շինությունների շինարարական աշխատանքները համապատասխան են քաղաքաշինական նորմերին:

Անհրաժեշտ է մշակել բնակավայրի քաղաքաշինական կանոնադրությունը:

4.2. Կենցաղային պայմանների ապահովում

Այս ուղղությամբ գյուղապետարանն իր առջև խնդիր է դնում բարեփոխումներ կատարել հետևյալ բնագավառներում՝

1) ապահովել բոլոր բնակելի առանձնատների երկարատև ջրամատակարարումը.
2) ավելացնել գազիֆիկացման ծավալները.
3) լուծել նոր փողոցների էլեկտրամատակարարման հարցը.
4) շարունակել լուսավորման համակարգերի կառուցման և դրանց սպասարկման աշխատանքները.

Համայնքի բնակչության անխափան և երկարատև ջրամատակարարման բարելավման նպատակով գյուղապետարանը նախատեսել է համայնքում իրագործել խմելու ջրի անցկացում առանձնատներ:

Նախատեսվում է գազամատակարարման գործընթացը շարունակել, 2014-2016 թվականներին գազատար ցանցեր անցկացնել և համայնքը գազիֆիկացնել 100 %-ով: Այս ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է համայնքի բյուջեից միջոցներ հատկացնել:

Համայնքի որոշ տարածքներում անմխիթար վիճակում են էլեկտրասյուները և հաղորդալարերը: Անհրաժեշտ է կառուցել նոր ուժային տրանսֆորմատորներ: Այս աշխատանքները պահանջում են մեծ ֆինանսական ներդրումներ: Անհրաժեշտ է 2014-2018 թվականներին համագործակցել «Հայաստանի Էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի հետ՝ վերը նշված աշխատանքներն իրագործելու համար:

4.3. Գյուղատնտեսություն և շրջակա միջավայրի պահպանություն

Համայնքում գյուղատնտեսության բնագավառի զարգացումն ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել հետևյալ խնդիրները.

1) աջակցել գյուղացիական տնտեսություններին՝ ոռոգման ջրով ապահովելու գործում.
2) կազմակերպել գյուղատնտեսական հողերի հաշվառում, փաստագրում, ինչպես նաև պայմանագրային հիմունքներով հատկացում.
3) օգնել գյուղացիական տնտեսություններին ձեռք բերելու պարարտանյութ, վառելիք և սերմեր՝ շուկայականից ցածր գներով.
4) անասնապահության բնագավառում իրականացնել անասունների հաշվառում, պրոֆիլակտիկ բուժում և կազմակերպել հակահամաճարակային միջոցառումներ:

Շրջակա միջավայրի պահպանության բնագավառի զարգացումն ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել հետևյալ գործառույթները.

1) ավելացնել փողոցների սանիտարական մաքրման և աղբահանության ծավալները.
2) իրականացնել կանաչապատման աշխատանքներ.
3) բնակչության կենցաղային աղբի հեռացման ծառայությունների, վարձավճարների գանձման մեխանիզմների բարելավում:

Կանաչապատման ուղղությամբ գյուղապետարանը նախատեսում է մշակույթի տան հրապարակը կառուցապատել և այն վերածել փոքրիկ պուրակի:

4.4. Առևտուր և կենցաղսպասարկում

Համայնքի զարգացման ռազմավարական ուղղություններից մեկը մասնավոր բիզնեսի ընդլայնումն է, որը ներկա պահին նոր աշխատատեղեր ստեղծելու լավագույն բնագավառն է:

Նախատեսվում է մարդկանց ցույց տալ ամեն տեսակի օժանդակություն՝ անհատ ձեռնարկատիրությամբ զբաղվելու համար:

Ելնելով բնակչության սպասարկման կուլտուրայի բարձրացման, համայնքի արտաքին տեսքի բարելավման անհրաժեշտությունից, անհրաժեշտ է մշտական վերահսկողություն սահմանել համայնքի տարածքում առևտրի ծառայություններ մատուցող շենքերի, շինությունների արտաքին տեսքի փոփոխությունների նկատմամբ: Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների շրջանակում անհրաժեշտ է կանոնակարգել առևտրի և ծառայությունների ոլորտում իրականացվող գործունեությունը, որը նաև կնպաստի սպառողների իրավունքների պաշտպանության ապահովմանը:

Այս ոլորտում հրատապ են հետևյալ խնդիրները.

1) իրականացնել հսկողություն՝ արտադրանքի վաճառքը կամ իրացումը կազմակերպելու միայն համապատասխան թույլտվության առկայության դեպքում, եթե գործունեությունը պահանջում է թույլտվություն.

2) կատարել պարբերաբար ստուգումներ՝ համայնքի բյուջե տեղական տուրքերի և վճարների մուտքերն ապահովելու նպատակով.

4.5. Սոցիալական ոլորտ և բնակչության իրավունքների պաշտպանություն

Համայնքում ուշադրության կենտրոնում է բնակչության սոցիալական պայմանների բարելավման խնդիրը:

Քառամյա ծրագրի շրջանակներում նախատեսվում է յուրաքանչյուր տարի ամբուլատորիայում կազմակերպել բժշկական որևէ մասնագիտական խմբի բաց դռների օր, որպեսզի համայնքի բնակչությունը կարողանա անցնել բժշկական զննում:

Սոցիալապես անապահով խավերին օգնելու համար յուրաքանչյուր տարի համայնքի բյուջեում նախատեսվելու է մոտ 2.0 միլիոն դրամ գումար:

Համայնքի բնակիչների իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու նպատակով գյուղապետարանում կշարունակվի կազմակերպվել համայնքի ղեկավարի և ավագանու անդամների ընդունելության օրեր, որի շնորհիվ բնակչությունը հնարավորություն կունենա մասնակցելու համայնքի կառավարմանը:

Գործում է Եղեգնավան համայնքի ինտերնետային կայքը, որը հնարավորություն է տալիս համայնքի բնակչությանը պարբերաբար տեղեկացված լինելու Եղեգնավան համայնքի իշխանությունների գործունեությանը, ծանոթանալու գյուղում իրագործվող և իրագործվելիք ծրագրերի ու բարեփոխումների ընթացքին, տեղեկություններ ստանալու համայնքի ղեկավարի և ավագանու որոշումների մասին:

Ինտերնետային կայքը հնարավորություն է տալիս համայնքի բնակչության հետ բաց երկխոսության միջոցով համատեղ ուժերով լուծելու համայնքում առկա հիմնախնդիրները:

Գյուղապետարանում ներդրվել է նաև տեղեկատվական ավտոմատացված համակարգ, որի օգնությամբ մարզպետարանի հետ գործում է էլեկտրոնային նամակագրություն:

4.6. Արտաքին հարաբերություններ

Սոցիալ-տնտեսական առաջընթացին, տեխնելոգիաների օր-օրի զարգացմանն ու ներդրմանը զուգահեռ անհրաժեշտություն է առաջանում նաև ստեղծելու մեր հանրապետության այլ համայնքների հետ սերտ կապեր: Անհրաժեշտ է համագործակցել առողջության պահպանման, սոցիալական ծրագրերի իրականացման, տարբեր միջոցառումների կազմակերպման ասպարեզներում: Համագործակցությունը մեր երկրի այլ համայնքների հետ հնարավորություն կտա ուսումնասիրելու այլ համայնքների կառավարման, բյուջետավարման գործընթացի կազմակերպման, բնակչության սոցիալ-տնտեսական զարգացման ապահովման, սոցիալական հավասարության պահպանման, առողջության պահպանման ծրագրերի իրագործման, մշակութային, սպորտային և հանգստի միջոցառումների կազմակերպման փորձը, համագործակցելու նշված ասպարեզներում:

Նախատեսվում է 2014-2018 թվականների քառամյա ծրագրի շրջանակներում ստեղծել այլ համայնքների հետ արտաքին կապեր և համագործակցել վերը նշված ոլորտներում:

Ծրագիր 1.
Փողոցների վերանորոգում և ասֆալտապատում

Ծրագրի նկարագրությունն ու հիմնավորումը

Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը կազմում է 7.12 կմ, որից 1 կմ-ը կենտրոնական ճանապարհն է: Համայնքի տարածքով անցնող մայրուղին ասֆալտապատ է և բարեկարգ վիճակում: 2013 թ-ին խմելու ջրի ներհամայնքային ցանցը վերանորոգելիս քանդվել են ինչպես կենտրոնական այնպես էլ մյուս փողոցները: Սույն ծրագրով նախատեսվում է իրականացնել ծրագիր կենտրոնական փողոցների ասֆալտապատման և մնացած փողոցների բարեկարգման աշխատանքներ:

Ծրագրի նպատակն ու խնդիրները

Ծրագրի նպատակն է ապահովել տրանսպորտային բոլոր միջոցների համար բավարար երթևեկության պայմաններ՝ տարվա բոլոր եղանակներին, վերացնել փողոցների ջրափոսերը, բարեկարգել փողոցները:

Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է ուսումնասիրել այն փողոցների ցանկը, որտեղ անհրաժեշտ է իրականացնել խճապատման աշխատանքները և ըստ առաջնահերթության հաստատել այն.

Ծրագրից սպասվող արդյունքները

Ծրագիրն իրականացնելը հնարավորություն կտա համայնքի փողոցները բերել բարեկարգ տեսքի, երթևեկության համար ստեղծել բավարար պայմաններ:

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատում

Նախնական մոտավոր հաշվարկներով ծրագրի իրականացման համար կպահանջվի մոտ 90,0 միլիոն դրամ, ուստի նպատակահարմար է փողոցների խճապատումը կատարել ոչ միայն համայնքի բյուջեի միջոցների հաշվին, այլև ներգրավել դոնոր կազմակերպությունները՝ ճանապարհների բարեկարգման խնդիրներն ավելի մեծ ծավալներով լուծելու համար:

Ծրագիր 2.

Խմելու ջրի նոր ջրագծերի կառուցում, բնակելի առանձնատների երկարատև ջրամատակարարման ապահովում

Ծրագրի նկարագրությունն ու հիմնավորումը

Ծրագիրը նախատեսում է Ա. Խանջյան և Պ. Սևակ փողոցներում ջրագծի կառուցում և բնակելի առանձնատների ջրամատակարարման ապահովում: Ծրագրի առաջնահերթության հիմնավորումը բացատրվում է նրանով, որ վերը նշված փողոցներում խմելու ջրի ջրագծերը բացակայում են:

Ծրագրի նպատակն ու խնդիրները

Համայնքի բնակչության անխափան և երկարատև ջրամատակարարման բարելավման նպատակով գյուղապետարանը նախատեսել է իրագործել 1300 գծմ նոր ջրագծի կառուցման աշխատանքներ:

Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ

1) կազմակերպել գնումների գործընթաց,
2) ծրագիրն իրականացնել 2014-2015 թվականների ընթացքում:

Ծրագրից սպասվող արդյունքները

Իրականացնելով այս ծրագիրը՝ համայնքը կապահովվի շուրջօրյա խմելու ջրով, կնվազեն խմելու ջրի կորուստները, կբարելավվեն համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները:

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատում

Նախնական մոտավոր հաշվարկներով 1300 գծմ երկարությամբ խմելու ջրագծի կառուցման աշխատանքների արժեքը կկազմի մոտ 1.5 միլիոն դրամ:

Ծրագիրն իրականացնելու համար անհրաժեշտ է ներգրավել նաև համայնքի բնակչությանը:

Ծրագիր 3.

Նախադպրոցական կրթության կազմակերպում և ապահովում

Ծրագրի նկարագրությունն ու հիմնավորումը

Ծրագրի նկարագրությունն ու հիմնավորումը՝ համայնքի նախադպրոցական տարիքի երեխաների առողջ ապրելակերպի, կրթության, մտավոր և ֆիզիկական բնականոն, ներդաշնակ զարգացման ապահովումն է:

Համայնքում հաշվառված են մինչև 6 տարեկան 95 երեխա, սակայն մանկապարտեզ են հաճախում մոտ 40 երեխա:

Մանկապարտեզը ժամանակավոր գործում է միջնակարգ դպրոցի շենքի մի մասում, որը հնարավորություն է տալիս նախադպրոցական կրթական ծրագրերի ուսուցմամբ երեխաներին նախապատրաստել դպրոցական ուսուցմանը:

Ծրագրի նպատակն ու խնդիրները

Ծրագրի նպատակն է երեխաների ֆիզիկական և հոգեկան առողջության պահպանումն ու ամրապնդումը, առողջ, զարգացած, կրթված սերունդ ունենալը, նպաստելու երեխաների կյանքի, առողջության պահպանմանը և ամրապնդմանը, ներդաշնակ ու համակողմանի զարգացմանը, ուսուցմանն ու դաստիարակությանը:

Ծրագիրը իրագործելու համար անհրաժեշտ է մանկապարտեզում բացել ևս մեկ խումբ:

Ծրագրից սպասվող արդյունքները

Նախադպրոցական հաստատությունում երեխաների տեղերի ոչ բավարար քանակը բացասաբար է անդրադառնում այն ընտանիքների սոցիալական վիճակի վրա, որտեղ կան նախադպրոցական տարիքի երեխաներ, որոնց մայրերը ստիպված են չաշխատելու և կազմակերպելու մանկահասակ երեխաների առօրյան և դաստիարակությունը:

Իրականացնելով ծրագիրը, համայնքի բոլոր ընտանիքները կունենան հնարավորություն՝ հավասարապես օգտվելու նախադպրոցական կրթական ծրագրերից, որտեղ կստեղծվեն բոլոր պայմանները երեխաների կարողությունների, ընդունակությունների, ձիրքերի դրսևորման, ինչպես նաև նպաստելու երեխաների կրթության և գեղագիտական դաստիարակության զարգացմանը, աշխարհայացքի ձևավորմանը:

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատում

Նախնական մոտավոր հաշվարկներով ևս 30 երեխաների նախադպրոցական կրթությունն ապահովելու նպատակով կպահանջվի տարեկան 1.5 մլն դրամ:

Ծրագիր 4.

Հանգստի գոտու ստեղծում

Ծրագրի նկարագրությունն ու հիմնավորումը

Բնակչության հանգստի կազմակերպման համար համայնքում անհրաժեշտ պայմաններ ստեղծելը հանդիսանում է գերակա խնդիր, որի լուծման նպատակով անհրաժեշտ է հանգստի գոտու ստեղծում, ինչպես նաև նախատեսվում է համայնքի երեխաների հանգիստը կազմակերպելու նպատակով, խաղահրապարակի կառուցում, տարբեր խաղային ատրակցիոններ տեղադրելու միջոցով:

Ծրագրի նպատակն ու խնդիրները

Ծրագրի նպատակն է

- բնակչության համար հանգստի գոտու ստեղծում,
- ծառուղիների ստեղծում,
- նստարանների տեղադրում,
- խաղային տարբեր ատրակցիոնների գնում ու տեղադրում
- անցկացնել լուսավորության ցանց,
- ծրագիրն իրականացնել 2014-2018 թվականների ընթացքում:

Ծրագրից սպասվող արդյունքները

Ծրագիրի շրջանակներում 2014-2018 թթ. նախատեսվում է իրականացնել բարեկարգման աշխատանքներ և միաժամանակ համայնքի կենտրոնում ստեղծել հանգստի գոտի:

Իրականացնելով այս ծրագիրը՝ համայնքի երեխաները իրենց ազատ ժամանակը կանցկացնեն մաքուր օդում խաղալով, շփվելով այլ երեխաների ու բնության հետ, որը կօժանդակի նրանց ֆիզիկական դաստիարակությանը, առողջության ամրապնդմանը.

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատում

Նախնական մոտավոր հաշվարկներով բարեկարգման աշխատանքների և հանգստի գոտու ստեղծման համար անհրաժեշտ է 5.0 մլն դրամ:

5. Համայնքի ֆինանսական միջոցների գնահատում և կանխատեսում

Համայնքում կոնկրետ ծրագիր իրականացնելու համար կարևոր նշանակություն ունի համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը: Եղեգնավան համայնքում այն ունի հետևյալ պատկեր՝

		2012 թ. Փաստ.	2013 թ. փաստ.	2014 թ. փաստ..	2015 թ. կանխ.	2016 թ. կանխ.	2017 թ. կանխ.	2018 թ. կանխ.
1	Ընդամենը եկամուտներ, որից՝	32410.7	35430.7	40583.8	40583.8	40583.8	40583.8	40583.8
2	ա/Հարկային եկամուտներ, ընդամենը	10215.8	9402.9	9550.2	9550.2	9550.2	9550.2	9550.2
2.1	այդ թվում՝ հողի հարկ	9249.9	8505.9	8800.2	8800.2	8800.2	8800.2	8800.2
2.2	գույքահարկ	667.3	897.0	750.0	750.0	750.0	750.0	750.0
3	բ/ Տուրքեր, ընդամենը	298.6	265.6	240.0	240.0	240.0	240.0	240.0
3.2	տեղական տուրքեր	240.0	265.6	240.0	240.0	240.0	240.0	240.0
4	գ/ Ոչ հարկային եկամուտներ, ընդամենը	2894.7	4969.8	4855.0	4855.0	4855.0	4855.0	4855.0
5	դ/ Պաշտոնական տրանսֆերտներ, ընդամենը	18797.0	20792.5	25888.6	25888.6	25888.6	25888.6	25888.6
5.1	այդ թվում՝ դոտացիա	18800.1	20792.5	25888.6	25888.6	25888.6	25888.6	25888.6
5.2	սուբվենցիա	-	626.5	-	-	-	-	-
6	ե/ Տարեսկզբի ազատ մնացորդ	-	4738.9	-	-	-	-	-
7	զ/ Մուտքեր հողի օտարումից	-	10662.0	-	-	-	-	-
8	է/ Այլ եկամուտներ	930.1	-	50.0	50.0	50.0	50.0	50.0

6. Համայնքի զարգացման քառամյա ծրագրի հիմնական ցուցանիշները

հ/հ	Ցուցանիշներ	Չափման միավոր	2013 թ. փաստացի
1	Համայնքի տարածքը	հա.	1152
2	Բնակչության թիվը	մարդ	2043
3	Ծնունդ	մարդ	11
4	Մահացություն	մարդ	10
5	Առևտրի օբյեկտների թիվը	հատ	6
6	Խմելու ջրի ներհամայնքային ցանցի երկարությունը	կմ.	4.7
7	Ոռոգման ջրի ներհամայնքային ցանցի երկարությունը կիսահողովակներով հողային հունով	կմ.	3.5 22.0
8	Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը	կմ.	9.1
9	Գազի խողովակաշար	կմ.	12.969
10	Ճանապարհային լուսավորություն	փողոց	10
11	Մասնավոր բնակարանային ֆոնդ	քմ	41680
12	Երեխաների թիվը միջնակարգ դպրոցում	մարդ	182
13	Երեխաների թիվը մանկապարտեզում	մարդ	35
14	Գյուղապետարանի աշխատողների թիվը	մարդ	15
15	Միջն. դպրոցի աշխատողների թիվը	մարդ	23
16	Մանկապարտեզի աշխատողների թիվը	մարդ	11

Գյուղատնտեսության ցուցանիշներ

1. Գյուղատնտեսական տնտեսությունների թիվը	
2. Գյուղատնտեսական արտադրանքի հիմնական տեսակների արտադրությունը /տ./	
ցորեն	429.0
գարի	9.0
կարտոֆիլ	60.0
բանջարանոցային մշակաբույս	2992.8
բոստանային մշակաբույս	2419.0
խաղող	1312.35
պտղի և հատապտղի տնկարկներ	1620.0
կերային մշակաբույս	1504.5
արևածաղիկ	750.0
կաթ	213.2
բուրդ	2.6
ձու /հատ/	170000
3. Ցանկատարածքություններ /հա./	
ցորեն	143.0
գարի	3.0
կարտոֆիլ	2.0
բանջարանոցային մշակաբույս	58.0
բոստանային մշակաբույս	41.0
խաղող	87.49
պտղի և հատապտղի տնկարկներ	54.0
կերային մշակաբույս	85.0
արևածաղիկ	30.0
4. Անասնագլխաքանակը /գլուխ, թև/	
խոշոր եղջերավոր անասուններ	432
այդ թվում կովեր	164
մանր եղջերավոր անասուններ	1736
խոզեր	68
թռչուններ	2426
5. Գյուղ. մեքենաների և գործիքների քանակը /հատ/, այդ թվում	
ա/ համայնքային սեփականության	
կոմբայն ՍԿ-5	1
էքսկովատոր	1
Խոտհնձիչ կոմբայն E281 c	1
բ/ մասնավոր սեփականություն	
տրակտորներ	7
կոմբայններ	0
բեռնատար ավտոմեքենաներ	7

7. Եզրափակում

Այսպիսով, համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագիրը հիմք կհանդիսանա համայնքի տարեկան ծրագրերի և բյուջեների մշակման աշխատանքները կազմակերպելիս: Անցյալ տարիների փորձը ցույց տվեց, որ տեղական ինքնակառավարման մարմինների արդյունավետ աշխատանքը մեծապես կախված է բյուջետավարման գործընթացի ճիշտ կազմակերպումից:

Շատ կարևոր է եկամուտների աղբյուրներ գտնելը, ֆինանսական միջոցների արդյունավետ հավաքագրման կազմակերպումն ու նպատակային օգտագործումը: Ելնելով համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագրի ռազմավարությունից և ընդհանուր նպատակներից, գյուղապետարանի աշխատակազմը մշակում է կոնկրետ ծրագրեր, որոնցով կարելի է հարց ներկայացնել հանրապետական բյուջեից ներդրումներ ստանալու համար, փնտրել ինվեստիցիաների նոր աղբյուրներ, տարբեր սոցիալական հիմնադրամների միջոցները:

Հավելված 1

ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ և ԵՆԹԱԿԱ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



Հավելված 2

ՑԱՆԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ

h/h	Օբյեկտի անվանումը	Չափման միավորը	Քանակը
1	Գյուղապետարանի շենք	հատ	1
2	Անասնագոմ/ոչխարների/	հատ	2
4	Բուժպունկտի շենք	հատ	1
5	Ջրի նասոսի շենք	հատ	1
6	Մշակույթի տան շենք	հատ	1

Հավելված 3

Հողային ֆոնդի առկայության և բաշխման

(ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի ու գործառնական նշանակության և սեփականության սուբյեկտների , առ 01.07.2014թ.)

NN	Նպատակային նշանակություն	Հողատեսք. գործառնական նշանակություն	Կոդի NN	Ընդամենը (2+3+4+8+12)	Սեփականության սուբյեկտ										
					Վերջին հաշվետվության	Ֆերմերային տնտեսության	համայնքային				պետական				Ճշտված նպատակ. նշանակ. հողամասերի հասարակ. մակերես
							ընդամենը (5+6+7)	ոչ գյուղատնտեսական նշանակության	ոչ գյուղատնտեսական նշանակության	գյուղատնտեսական նշանակության	ընդամենը (9+10+11)	ոչ գյուղատնտեսական նշանակության	ոչ գյուղատնտեսական նշանակության	գյուղատնտեսական նշանակության	
	Ա	Բ	Գ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1.1	1. Գյուղատնտեսական նշան.	Վարելահող		402.72	157.11		245.62		219.66	25.96					
1.2		բազմ տնկարկներ, ընդամենը		92.41	92.41										
1.2.1		այդ թվում պտղատու այգի		4.92	4.92										
1.2.2		խաղողի այգի		87.49	87.49										
1.2.3		այլ բազմամյա													
1.3		խոտհարք													
1.4		արոտ		39.07			39.07		24.70	14.37					
1.5		այլ հողատեսքեր		436.95	11.53		425.42			425.42					
1		Ընդամենը		971.15	261.04		710.11		244.36	465.75					
2.1	2. Բնակելի և հասարակական կառուցապատման հողեր	բնակելի կառուցապատման		95.27	94.32		0.95			0.95					
2.1.1		այդ թվում տնամերձ հողեր		95.27	94.32		0.95			0.95					
2.1.2		այգեգործական (ամառ-ն)													
2.2		հասարակական կառուցապ.		2.59	0.05	0.04	1.82			1.82	0.68	0.62		0.06	
2.3		խառը կառուցապատման													
2.4		ընդհանուր օգտագործման		12.42			12.42			12.42					
2.5		այլ հողեր		4.00			4.00		0.02	3.98					
2		Ընդամենը		114.28	94.37	0.04	19.19		0.02	19.17	0.68	0.62		0.06	
3.1	3. Արդյունաբ. ընդերքօգտ. և տրանսպորտի այլ նշան. օբ.	արդյունաբերության		0.97	0.97										
3.2		գյուղտնտեսական, արտադր.		8.69	7.61		1.08			1.08					
3.3		պահեստարանների													
3.4		ընդերք օգտագործման													
3		Ընդամենը		9.66	8.58		1.08			1.08					
4.1	4. Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ տնտեսության և այլ նշան. օբ.	էներգետիկայի		0.57			0.01			0.01	0.56			0.56	
4.2		կապի													
4.3		տրանսպորտի		7.12							7.12			7.12	
4.4		կոմունալ ենթակառուցվածք													
4		Ընդամենը		7.69			0.01			0.01	7.68			7.68	
5.1	5. Հատուկ պահպանվող տարածքներ	բնապահպանական													
5.1.1		այդ թվում արգելոցներ													
5.1.2		արգելավայրեր													
5.1.3		ազգային պարկեր													
5.2		առողջարարական													
5.3		հանգստի													
5.4		պատմական և մշակութային		3.25			3.25			3.25					
5		Ընդամենը		3.25			3.25			3.25					
6	6. Հատուկ նշանակության	Ընդամենը		12.19			0.036	0.036			12.15			12.15	
7.1	7. Անտառային	անտառ													
7.2		թփուտ													
7.3		վարելահող													
7.4		խոտհարք													
7.5		արոտ													
7.6		այլ հողեր													
7		Ընդամենը													
8.1	8. Ջրային	գետեր		3.31							3.31			3.31	
8.2		ջրամբարներ													
8.3		լճեր		0.47			0.47			0.47					
8.4		ջրանցքներ		10.22			4.31			4.31	5.91			5.91	
8.5		հիդրոտեխ. և ջրտնտ. այլ օբ.		19.78			0.87			0.87	18.91	0.29		18.62	
8		Ընդամենը		33.78			5.65			5.65	28.13	0.29		27.84	
9.1	9. Պահուստային	աղուտներ													
9.2		ավազուտներ													
9.3		ճահիճներ													
9.4															
9.5		այլ անօգտագործելի հողեր													
9		Ընդամենը													
ԸՆԴԱՄԵՆԸ ՀՈՂԵՐ (1+2+3+4+5+6+7+8+9)				1152.00	363.99	0.04	739.33	0.04	244.38	494.91	48.64	0.92		47.73	